տէրն ամենայն ընտանեօք։ Եւ աւուրքս Բ մեծ նաւ եկին[1]) ի Մսրայ որ ասի գալիօն և Գ այլ որ ասի չայ-կա։ Զ եղև բրինձն։

Կիրակի ԺԴ-ի[2]) Սուրբ Խաչ։ Առաւօտուս կարդա-ցին յեկեղեցիս մեր զթուղթ Աստուածատուր վարդա-պետին թէ Հասաք յերուսաղէմ և ոչ գտաք զեղիա-զար վարդապետն աստ, այլ և պատուէր թէ Ուխտ և դաշինք մեր հաստատուն լիցի վասն եղիազար վար-դապետին թէ նա է յաջորդն իմ։

Երեկոյիս զատրզայիւ եկն ի Պօղազէ անտի, որ էր առ վէզիրիւն՝ Քեօր Հասան փաշան. յղեալ վէ-զիրին զնա առ թագաւորն թէ Զգա դիցես զայմա-խամ և զառաջինն բերցես ընդ քեզ. որով եւ թա-գաւորն տեսանէր զպատրաստութիւն պատերազմին փոյթ ընդ փոյթ։ Եւ այլ ևս նաւ եկն Բ ի Մսրայ ամե-նայն բարեաւ։

Եւ մեր Վարդապետի աբեղան եկն յԱստուածա-ծին և ոչ թողին. և մեր տեսեալ զնա ուղևորեցաք ի Պրուսա գնալ առ Վարդապետն որ յերուսաղէմ։

Կիրակի (20 Սեպտ.). բարեկենդան Սուրբ Խաչի Վարագայ։

Դշի (23 Սեպտ.). Եկ վալիտէն որ մայր թագա-ւորի ասի և գնաց ի դուրս ի քաղաքէն առ բանակ թագաւորին, որ և առաւօտուս Եշի (24 Սեպտ.) թա-գաւորն ամենայն մեծամեծօք եւ ծառայիւք, մուհ-տոմն և զազիէսքէրովքն և փաշայիւքն բանակ արա-բեալ առաջի նորա երթային դասս դասս՝ ելեալ ի քա-ղաքէս, ի դրանէն այնմ որ ասի Անդրիանու դուռ և գնաց ազաւ առ բանակաւն։

Շաբաթ (26 Սեպտ.). եկին ի գիւղէն ամենեքեան։

Կիրակի (27 Սեպտ.). Վարագայ սուրբ Խաչ։ Օրս

1) եկն. 2) ԺԴ-ի.